

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ա. Ա. ԼԱԼԱՅԱՆ

Ն. Ա. ՎԵԼՅԱՄԻՆՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայրենական վերարտադրության հիմնադրանքներից մեկը՝ Ն. Ա. Վելյամինովը 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ծառայել է Հայաստանում որպես ղեկավարական բժիշկ։ 1877 թվականին ավարտելով Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը, Ն. Ա. Վելյամինովը մեկնում է Կովկաս՝ ռուս-թուրքական պատերազմի շրջանը։ Այստեղ սկզբում նա աշխատում է Թիֆլիսի զինվորական հոսպիտալում, ապա, շուտով, ռազմաճակատում՝ որպես գործող բանակի 155-րդ գնդի կրտսեր բժիշկ։ Այստեղից նա տեղափոխվում է Ալեքսանդրապոլ (Լենինական) որպես № 10 ռազմա-ժամանակավոր հոսպիտալի կրտսեր օրդինատոր։ Այդ պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլում կային հազարավոր վիրավորներ ու հիվանդներ։ Շրիտադարձ բժիշկ Ն. Ա. Վելյամինովի համար բացվում է գործունեության եռուն և պատասխանատու ասպարեզ։ Այստեղ նա սկզբում աշխատում է գոցենա Կ. Կ. Ռենյերի ղեկավարությամբ, ապա վերջինիս մեկնումից հետո, Ֆ. Կ. Բորնգաուսլուի հետ միասին ինքնուրույն ղեկավարում № 10 ռազմա-ժամանակավոր հոսպիտալը։

Հայաստանում Ն. Ա. Վելյամինովի ծավալած գործունեության մասին մենք տեղեկություններ ենք գտնում Ֆ. Կ. Բորնգաուսլուի ու Ն. Ա. Վելյամինովի «1877—78 թթ. կամպանիայի ժամանակ Կովկասում դաշտային վիրարտադրությունից», մասամբ նաև Կ. Մ. Գորկելիչևիչի «Նյու-թեր Ասիական Թուրքիայում 1877 թվականի պատերազմում դաշտային վիրարտադրության համար» վերնագրերը կրող աշխատություններում։

Այդ աշխատությունները, դրանցից առաջինը հատկապես հնարավորություն են տալիս որոշ չափով լուսարանելու Հայաստանում Ն. Ա. Վելյամինովի ծավալած գործունեությունը։

Ն. Ա. Վելյամինովը և Ֆ. Կ. Բորնգաուսլուն «1877—78 թթ. կամպանիայի ժամանակ Կովկասում դաշտային վիրարտադրությունից» վերնագրերը կրող իրենց աշխատության ներածության մեջ համառոտակի տալիս են 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսական բանակի թիկունքում ռազմա-ժամանակավոր հոսպիտալներում վիրավորներին ցույց տրված օգնության վերաբերյալ մի շարք տեղեկություններ։ Այս տեղեկությունները խոսում են այն մասին, որ պատերազմի սկզբնական շրջանում այդ տիպի հոսպիտալներում վիրավորներին ցույց տրվող օգնությունը լավ էր կազմակերպված և գրեթե արդյունք էր տալիս։ Սակայն աշունը վրա հասնելու հետ միասին դրությունը խիստ փոխվում է ղեկի վատը։ Կլիմայական պայմանները, զինվորների հյուծվածությունը մի կողմից՝ զանազան համաճարակներ և վիրավորների թվի հակառակն աճը մյուս կողմից՝ պայմանավորեցին վերոհիշյալ փոփոխությունը, որը հասկանալի էր ցայտուն կերպով դրսևորվում էր ռազմաճակատին մոտիկ գտնվող հոսպիտալներում, ինչպես էին Ալեքսանդրապոլի հոսպիտալները։

Այնուհետև տեղեկություններ են բերվում Ալեքսանդրապոլի հոսպիտալներում վիրավորներին ու հիվանդներին կուտակվածության մասին։ Մոտակա ռազմաճակատից Ալեքսանդրապոլի հոսպիտալներն էին ուղարկվում ամեն տեսակի վիրավորներ ու հիվանդներ, շատ ավելի մեծ թվով, քան այդ հոսպիտալները կարող էին ընդունել։ Կարճատև դադարից հետո այդ վիրավորները տեղափոխվում էին ավելի խոր թիկունք։ Զինվորական վարչության գործունեության թերությունների հետևանքով հաճախ տեղափոխվում էին այնպիսի վիրավորներ ու հիվանդներ, որոնք չպետք է տեղափոխվեին։ Սեպտեմբերին ղեկի Ալեքսանդրապոլի հոսպիտալները բերվող վիրավորների ու հիվանդների թիվը հսկայական չափերի հասավ։ Քաղաքի հոսպիտալներում պատկած էին 4000 մարդ, մինչդեռ այդ հոսպիտալների նորմալ տարողությունը հավասար էր 3100 մարդու։ Նրան հաջորդեցին առանցք, որ հոսպիտալները զուրկ էին տարրական հարմարություններից, ապա անհնայտ կդառնա այն հակահիգիենիկ պատկերը, որ ստեղծվել էր Ալեքսանդրապոլում։

Այն հակահիգիենիկ պատկերը, որ նկարագրել էր Ա. Պ. Գորբոսլովիչը Ալեքսանդրապոլի

վերաբերյալ, շատ ավելի թանձրացավ հետազոտում, երբ Ա. Պ. Գորբուլովինը արդեն Պետերբուրգում էր գտնվում: Ն. Ա. Վելյամինովի և Ֆ. Կ. Բորնգաուստի աշխատության առաջին հատվածները հանդիսանում են Ա. Պ. Գորբուլովինի նկարագրության, ասես, մի տեսակ շարունակություն և բացահայտում են Ալեքսանդրապոլի, իբրև համատարած հոսպիտալի, պատկերը 1877 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1878 թ. հունվարի 1-ը ժամանակաշրջանում:

Հոսպիտալները տեղավորված էին թե՛ քաղաքում՝ այդ նպատակի համար այս կամ այն չափով պիտանի տներում և թե՛ քաղաքի շրջապատում՝ ճամբարային վրաններում:

Ցրտերը դժվարացնում էին օդափոխության կազմակերպումը և հոսպիտալներում տիրում էր ծանր զարշահոտություն: Զուգարաններ, ինչպես և հին վիրակապերը ոչնչացնելու որևէ հարձարություն չլինելու հետևանքով հոսպիտալների շրջապատը լի էր ամեն տեսակի աղտոտություններով: Այդպիսի հակահիգիենիկ պայմաններում պատահական չէր վիրավորների վարակվելը զանազան ինֆեկցիոն հիվանդություններով: Գնալով ավելի էին կուտակվում այնպիսի ծանր վիրավորները, որոնց չէր կարելի տեղափոխել, այլ անհրաժեշտ էր որակավոր օգնություն ցույց տալ տեղում: Այդ անբարենպաստ պայմանները պատճառ բերելով, կոնսուլտանտ-վիրաբույժ, դոցենտ Կ. Կ. Ռեյերը միջնորդեց, որպեսզի Ալեքսանդրապոլի № 10 ռազմա-ժամանակավոր հոսպիտալում օպերացիոն կետ բացվի: Այդ միջնորդությունը հարգվեց, և 1877 թվականին ստեղծվեց վերոհիշյալ օպերացիոն կետը, որը ղեկավարում էր ինքը՝ դոցենտ Կ. Կ. Ռեյերը: Առանկ, բացի գլխավոր բժշկից, աշխատում էին նաև 6 բժիշկներ, այդ թվում՝ ավագ օրդինատոր Ֆ. Կ. Բորնգաուստը, կրտսեր օրդինատոր Ն. Ա. Վելյամինովը, բժիշկ Ս. Ի. Փայանթարովը, բժիշկ Կ. Մ. Գորելյչենկոն և ուրիշներ:

Այնուհետև հիգիենական նկարագրում են, թե ինչպիսի պայմաններում է գործել № 10 հոսպիտալը: Այդ տվյալներից երևում է, որ հոսպիտալի անձնակազմը իր հսկայական քանակի շնորհիվ կարողացել է Ալեքսանդրապոլում ստեղծել բարձրորակ վիրաբույժական օգնության յուրատեսակ մի կենտրոն: Տարբեր հոսպիտալներից այստեղ են ուղարկվել առավել ծանր վիրաբույժական դեպքերը, այստեղ կատարվել են հարյուրավոր քաղց օպերացիաներ: № 10 հոսպիտալը դարձել է յուրատեսակ օրինակելի բժշկական մի հաստատություն: Ի տարբերություն Ալեքսանդրապոլի մյուս հոսպիտալների, այստեղ ստեղծվել են հիգիենիկ տեսակետից փոքրիշատե տանիքի պայմաններ:

Կ. Մ. Գորելյչենկոյի հաղորդած տեղեկություններից երևում է, որ № 10 ռազմա-ժամանակավոր հոսպիտալը բացվել է Մացր գյուղում 1877 թ. հունիսին և նույն ամսին էլ տեղափոխվել է Ալեքսանդրապոլ: Այստեղ, քաղաքից մի փոքր հեռու, հյուսիս-արևմտյան մասում, հարթավայրի վրա տեղավորվում են 7 հոսպիտալներ, այդ թվում նաև № 10 ռազմա-ժամանակավոր հոսպիտալը: Հնդիսակի վիլայոթիամբ, վերոհիշյալ վայրը սանիտարական տեսակետից հոսպիտալների համար բավականաչափ նպաստավոր էր: Ամառն այդտեղ գրվ էր, խմելու համար օդտազործվում էր արշիտների ջուրը, քաղաքից բերվում էր լավորակ անունդ Կ. Մ. Գորելյչենկոն տեղեկություններ է բերում վերոհիշյալ հոսպիտալի կառուցվածքի և նրա գործունեության վերաբերյալ:

Վերը նշված պայմաններում աշխատող № 10 ռազմա-ժամանակավոր հոսպիտալի գործունեության մանրամասն նկարագրությունը մենք գտնում ենք Ն. Ա. Վելյամինովի և Ֆ. Կ. Բորնգաուստի վերոհիշյալ աշխատության մեջ: Սակայն այդ նկարագրությունը բոլորովին տարբերվում է հոսպիտալների գործունեության վերաբերյալ այն հաշվառություններից, որոնցով հարուստ է այդ ժամանակաշրջանի բժշկական գրականությունը: Այդ տարբերությունն ի հայտ է գալիս ինչպես զրա ձևի, այնպես էլ բովանդակության մեջ:

Ինչ վերաբերում է հոսպիտալի վիրաբույժական հարուստ գործունեությանը, ապա այն նկարագրվում է բավականաչափ հանդամանորեն: Վիրավորումները նկարագրվում են ըստ առանձին տեսակների, փոքրիշատե հետաքրքրություն ներկայացնող դեպքերն օժտվում են հիվանդության պատմությամբ, իսկ զրանցից մահացու ելրով ավարտվածները՝ հերձման արձանագրությամբ:

Նկարագրվում է արժեքավորվում են այդ պատերազմի ժամանակաշրջանում Կովկասյան ռազմաճակատում վիրաբույժական օգնության համարյա բոլոր, փոքրիշատե կարևորություններ կայացնող հարցերը:

Շէրագենային վիրավորումների հետազոտության և բուժման ընդհանուր ձևերը՝ վերնագրի տակ հնդիսակները նկարագրում են, թե ինչպիսի ձևերով են կատարել հրազենային վիրավորումների հետազոտությունն ու բուժումը 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Կովկասում գործող բժիշկները:

Վիրահատական տեխնիկայի կապակցությամբ հիգիենական նկարագրում են այն մեթոդները, որոնցից օգտվել են նրանք օպերացիաներ կատարելիս: Վիրակապ Վերնագրի տակ վեր-

լուծվում են այդ պատերազմի ժամանակ Կովկասում կիրառված վերականգնի տեսակները՝ Տեղեկություններ և բերվում վերավորների խնամքի վերաբերյալ:

Այնուհետև հեղինակներն անդրադառնում են վերավորումների առանձին տեսակներին:

1. Դեմքի վերավորումներ—Լղել է 24 ղեպը, որոնցից մեկը մահացու էլքով: Բերվում է վերջին ղեպի հիվանդության պատմությունը և հերձման արձանագրությունը:

2. Գլխի վերավորումներ—21 ղեպից 2-ը վերջացել է մահվամբ: Տրվում է այդ 2 ղեպի հիվանդության պատմությունը և հերձման արձանագրությունը:

3. Վզի վերավորումներ—9 ղեպը՝ բարեհաջող էլքով:

4. Կրծքի վերավորումներ—13 ղեպը, որից 10-ը մահացու էլքով: Տրվում են մահվան պատճառները: Բերվում են 3 ղեպի հիվանդության պատմությունները:

5. Որովայնի, կոնքի և սեռական մասերի վերավորումներ—39 ղեպը, որից 4-ը մահացու էլքով: Բերվում են վերջին 4 ղեպերի հիվանդության պատմությունները և հերձման արձանագրությունները:

6. Հեղինակները շատ ավելի հանգամանորեն են կանգ առնում վերին ու ստորին վերջույթների վերավորումների վրա: Վերին վերջույթների վերավորումները եղել է 149 ղեպը, որից 15-ը մահացու էլքով: Բերվում են մահվան ղեպերի պատճառները, ինչպես նաև բուժման կիրառված մեթոդների արդյունքները: Մինչև են բերվում մի շարք վերավորների հիվանդության պատմությունները, ինչպես նաև մահացած ղեպերի հերձման արձանագրությունները:

7. Ստորին վերջույթների վերավորումներ—203, մահացու էլքով՝ 45: Ինչպես վերին վերջույթների վերավորումների ղեպերում, այստեղ էլ բավականաչափ հանգամանորեն տեղեկություններ են բերված:

Ինչպես վերին, այնպես էլ ստորին վերջույթների վերավորումներին վերաբերող առանձին հետազոտական ղեպերը իլյուստրացիայի են ենթարկված դրանց նկարներով:

Շատ հանգամանորեն, իրենց հիվանդության պատմությունների հետ մեկտեղ, բերված են հոգերի վերավորման և դրանց հետագա բորբոքման ղեպերի վերաբերյալ տեղեկություններ: Գրանք վերաբերում են հաճախա-դասարակային, արմնկային, ուսային, սրունքաթաթային և ծնկային հոգերի վերավորումներին ու հետագա բորբոքումների 66 ղեպերին:

Հեղինակները անդրադառնում են նաև ամպուտացիաներին ու ռեզեկցիաներին: Վերը նշված ժամանակաըջանում № 10 հոսպիտալում կատարվել է 38 ամպուտացիա և 32 ռեզեկցիա:

«1877—78 թթ. կամպանիայի ժամանակ Կովկասում դաշտային վիրաբուժությունը» վերնագիրը կրող իրենց աշխատության մեջ Ն. Ա. Վեյլամինովը և Ծ. Կ. Բորնգաուստը կանգ են առնում վնասվածքների մեխանիզմի հարցի, ինչպես նաև հրացանի տարբեր տեսիլի զնդակներից առաջացած վիրավորումների մեխանիզմների բացահայտման վրա: Այնուհետև նրանք վերլուծում են հրացանի զնդակներից մարմնի մեջ առաջացած փոփոխությունները:

«Մահվան պատճառների և հերձման արդյունքների մասին» վերնագրի տակ հեղինակները վերլուծում են № 10 հոսպիտալի 104 մահացության ղեպերը, որոնցից 91-ը ենթարկվել է դեմ-հերձման: Հեղինակները ստանձնապես կանգ են առնում տեպոնցեմիայից ու պեմիայից առաջացած մահվան ղեպերի վրա:

Աշխատությունը վերջանում է ընդհանուր ակնարկով: Այդ ակնարկում հեղինակները ընդհանուր հայտարարի են բերում № 10 հոսպիտալի աշխատանքի արդյունքները և տալիս են ուղղ-մական հոսպիտալի իրենց նախագիծը:

№ 10 հոսպիտալը, Ալեքսանդրապոլի րազմաթիվ ռազմա-ժամանակավոր հոսպիտալներում ստանալով վիրավորներին որակավոր վիրաբուժական օգնություն ցույց տալու, մասնագիտական հոսպիտալ ստեղծելու մի փորձ էր: Եվ եթե այդ զորքը լրիվ հաջողությամբ չպատկվեց, ապա դրանում ամենից բիշ մեղավոր էին նրա նախաձեռնողները: № 10 հոսպիտալը սովորական հոսպիտալ չէր, այլ վիրաբուժական ծանր օպերացիաների կենտրոն էր, որի դերը արժեքավորել են իրենք՝ Վեյլամինովը և Բորնգաուստը, ամենից առաջ կանգ առնելով նրա թերությունների վրա: Հոսպիտալի աշխատանքի թերությունները բխում էին այն հակահիդիենիկ պայմաններից, որ տիրում էին Ալեքսանդրապոլում վերը նշված պատերազմի ժամանակ:

Երբ հիմնադրվեց № 10 հոսպիտալը, Ալեքսանդրապոլի մյուս հոսպիտալներից սկսեցին այնտեղ ուղարկել վիրաբուժական ծանր ղեպերի հետ նաև բարձրիժող արված բուրբուրիկն անհոսպիտալ հիվանդներ, որոնց հոսպիտալում հազիվ թե հնարավոր լիներ որևէ բանով օգնել: Հոսպիտալի, որպես օպերացիոն կետի, գործունեությունը շատ կարճ տևեց: Երբ հիվանդների ու վիրավորների հոսանքը շատ մեծացավ, զինվորական վարչությունը, խախտելով իր խոստումը, սկսեց № 10 հոսպիտալ ուղարկել նաև դանազան ինֆեկցիոն հիվանդություններով տա-

ռապոդ Հիվանդներ, որի հետևանքով հոսպիտալում տարածվեց տիֆը, Տիֆը տարածվեց ոչ միայն վիրավորներին, այլև հոսպիտալի բուժող անձնակազմի մեջ և դրանով վերջնականապես դադարեց հոսպիտալի, որպես օպերացիոն կետի, գործունեությունը:

Հոսպիտալի կատարած զբաղմունքները հեղինակները ձևակերպում են հետևյալ կերպ.

1. Հոսպիտալը փրկեց մի շարք, համեմատաբար ոչ մեծ թվով վիրավորների կյանք, որոնք, Ալեքսանդրապոլի այլ հոսպիտալներում մնալով, հավանաբար կզոհվեին:

2. Հոսպիտալի գործունեությունը ցույց տվեց, որ բուժման լավագույն մեթոդները անարդյունավետ են դառնում, երբ կիրառվում են ուշացումով և հակահիգիենիկ պայմաններում:

3. Հոսպիտալը լավագույն դպրոց հանդիսացավ մի շարք երիտասարդ վիրաբույժների համար:

Այդ հոսպիտալում ծառայած երիտասարդ բժիշկներին մեծ մասը հետագայում դարձան նշանավոր վիրաբույժներ և Ն. Ա. Վելյամինովը ակադեմիկոս էր, Ռադմա-բժշկական ակադեմիայի վիրաբույժության պրոֆեսորը Ֆ. Կ. Բորնգաուստը վիրաբույժության պրոֆեսոր էր Կիևի համալսարանի բժշկական ֆակուլտետում: Ա. Ի. Քալանթարովը (Քալանթարյանց) պրիվատ-դոցենտ էր Պետերբուրգի Ռադմա-բժշկական ակադեմիայում:

Վերոհիշյալ աշխատության վերջում հեղինակները բնդհանուր գծերով նախագծում են այն հոսպիտալի կառուցվածքը, որ նրանք ամենից ավելի նպատակահարմար են գտնում ունենալ տվյալ պայմաններում: Այդպիսի հոսպիտալը պետք է ունենա 60 ծանր վիրավորներ, ունենա 3 բժիշկ՝ պրոֆեսոր-վիրաբույժի վերահսկողությամբ, Այդպիսի հոսպիտալները պետք է զտնվեն ճակատային գծին մոտ և ունենան գիտության ու տեխնիկայի վերջին խոսքին համապատասխանող կահավորում և գործիքներ:

Հեղինակներն իրենց աշխատությունն ավարտում են նրանով, որ պատերազմում բժշկական զործը պետք է ղեկավարեն բժիշկներ և ոչ թե բժշկությունից շատ հեռու կանգնած զանազան տեսակի շինովներին:

Դժվար է նույնիսկ պատկերացնել, թե այդպիսի դժվարին պայմաններում, այդպիսի հսկայական ծանրաբեռնվածությամբ աշխատելիս ինչպես հնարավոր էր այնքան բարեխղճորեն կազմել և հավաքել այն նյութերը, որոնք հիմք են հանդիսացել այս աշխատության համար: Հայաստանում ծառայած արզնի առաջին ուսուցիչները, հանձին Շուլերի, իրենց պրակտիկ գործունեությունը համակցել են գիտական հետազոտությունների և բնդհանրացումների հետ: Այդ հիմնադրի հատկությունը զրոստովել է ինչպես խաղաղ պայմաններում, այնպես էլ պատերազմի ժամանակ նրանց աշխատանքի պրոցեսում: Դրա լավագույն ապացույցներից մեկն էլ Վելյամինովի և Բորնգաուստի աշխատությունն է, որի մասին վերևում ասվեց:

Ն. Ա. Վելյամինովի և Ֆ. Կ. Բորնգաուստի կատարած աշխատանքը իր ժամանակին արդեն բարձր արժեքավորում էր զույգ Ստանից կես դար առաջ, 1908 թվականին, երբ պրոֆ. Ն. Ա. Վելյամինովը առաջագրվեց ակադեմիկոսի կոչման, նրա գործունեության ղեկավարականի մեջ չմտնողից նաև «1877—78 թթ. կամպանիայի ժամանակ Կովկասում դաշտային վիրաբույժությունից» աշխատությունը, որի մասին նշվեց, թե յայդ աշխատությունը, որը ուշագործության է առնվել նաև Պիրոգոսի կողմից, հենց այն ժամանակ էլ ուսուցական բժշկական աշխարհի ուշագործությունը դարձրեց երիտասարդ հեղինակների վրա:

Կես դար է անցել վերոհիշյալ արժեքավորումից, բայց այսօր էլ Ն. Ա. Վելյամինովի և Ֆ. Կ. Բորնգաուստի այդ աշխատությունը որոշ կողմերով պահպանել է իր արժեքը: Վելյամինովի և Բորնգաուստի «1877—78 թթ. կամպանիայի ժամանակ Կովկասում դաշտային վիրաբույժությունից» աշխատությունը 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Կովկասում վիրաբույժական օգնության վերաբերյալ ամենից ավելի հանգամանորեն կատարված ուսումնասիրությունն է, որ այսօր մեզ հնարավորություն է տալիս դատելու, թե ինչպիսի՞ն է եղել վիրաբույժական օգնությունը այդ կամպանիայի ժամանակ Կովկասում:

Այդ առումով՝ վերոհիշյալ աշխատությունը բժշկա-պատմական բնույթի մեծարժեք սկզբունքավոր է:

Վերը նշված աշխատությունը կարևոր է նաև Ն. Ա. Վելյամինովի կենսագրության տեսական տիպի իբրև նրա գործունեության առաջնեկ:

Հայաստանում Ն. Ա. Վելյամինովի կատարած աշխատանքը հանդիսացավ ապագա նշանավոր վիրաբույժի բեղմնավոր գործունեության սկիզբը:

Այդ փաստը բնդգծել է Ն. Ա. Լանդշեսկին ղեկ 1898 թվականին, որ Վելյամինովի՝ Կ. Կ. Ռեյերի ափսոսնա նշանակվելը «հանդիսացավ նրա գիտական և պրակտիկ գործունեության սկիզբը»: Ի դեպ Ն. Ա. Վելյամինովի մասին Ա. Լանդշեսկու հաղորդած տեղեկությունները

առանձնահատուկ արժեք են ներկայացնում այն իմաստով, որ դրանք նա գրի է առել Ն. Ա. Վելյամինովի խոսքերից: Դրա համար էլ ավելորդ չի լինի մեջ բերել Վելյամինովի կենսագրությունից մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ հատվածը:

«1877 թ. մարտի 13-ին Վելյամինովը ծառայության ընդունվեց Ռիֆլիսի ռազմական հոսպիտալը որպես վիրաբուժական բաժանմունքի օրդինատոր: Արդեն մայիսի վերջին նա գործուղվեց զործող բանակ և, որպես 155-րդ Կուբանյան հետևակային զինդի կառավարի բժիշկ, այդ զինում նա մնաց 4 ամիս: Հոկտեմբերի սկզբին նա նշանակվում է Կովկասյան բանակի կոնսուլտանտ-վիրաբույժ, Դորպատի համալսարանի դոցենտ Կ. Կ. Ռեյերի ասիստենտը: Այդ նշանակումը հաճելի չմտնեցավ էր երիտասարդ զինդային բժշկի համար: Գնդի հետ միասին տեղափոխվեցին ծամանակ, նա լինելով գլխավոր ջոկատի ճամբարում Կյուրյուկ-Ղարայի տակ, այցելեց, ի միջի այլոց, նաև Կարմիր Խաչի հոսպիտալը, որը ղեկավարում էր Ռեյերը, և ծանոթացավ վերջինիս հետ:

Նրբ սկսեցին վերջին Ռեյերը հանձնեց Կարմիր Խաչի հոսպիտալը և նշանակվեց Կովկասյան բանակի կոնսուլտանտ-վիրաբույժ. նա պահանջեց իրեն երեք ասիստենտներ նշանակել, նշելով ռազմական բժիշկներ Բորնգաուպտին (այժմ պրոֆեսոր Կիևում), Կորշին և Վելյամինովին: Այսպիսով, տեղի ունեցավ Նիկոլայ Ալեքսանդրովիչի համար այս անսպասելի նշանակումը, որը հանդիսացավ նրա գիտական և պրակտիկ գործունեության սկիզբը: Ալեքսանդրապոլ գալուց անմիջապես հետո, որտեղ աշխատում էր Ռեյերը, նա ընկավ ռազմա-ժամանակավոր հոսպիտալ-ներում լայն ռազմա-վիրաբուժական գործունեության եռուզեռի մեջ: Բժիշկ Կորշը շուտով հետ գործուղվեց, իսկ Բորնգաուպտը և Վելյամինովը սկզբում պարձան տաղանդավոր և անսահման ներքնակով լի Ռեյերի մերձավորագույն աշխատակիցները, իսկ նրա մեկնելուց հետո՝ ինքնուրույն աշխատողներ Ն 10 ռազմա-ժամանակավոր հոսպիտալում:

«...Դեկտեմբերին վիրաբուժական աշխատանքը փոխարինվեց զուտ թերապևտիկ աշխատանքով՝ տիֆոզ հիվանդների բուժումով, հիվանդներ որոնցով լիքն էին Ալեքսանդրապոլի հոսպիտալները: Անվերջ հոգնածության և լարված գործունեության այդ շրջանն ավարտվեց 1878 թ. դեկտեմբերին, երբ Նիկոլայ Ալեքսանդրովիչը ծանր հիվանդացավ տիֆով: Ապարինվելուց հետո նա ուղարկվեց տուն՝ կազդուրվելու, իսկ այդ ժամանակ ավարտվեցին նաև ռազմական գործողությունները»:

Հայաստանում ծառայելը մեծ դեր խաղաց բազմաթիվ բժիշկների, այդ թվում նաև, մասնավորապես, Ն. Ա. Վելյամինովի կյանքում: Նորավարտ բժիշկը ուսանողական նստաքանից անմիջապես հանդես եկավ գործունեության մի բարդ ու ղեկավարին ասպարեղում, ինչպիսին էր Ալեքսանդրապոլ քաղաքը, որտեղ կային ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ռազմաճակատից բերված հազարավոր վիրավորներ:

Այստեղ նա պրակտիկայում կիրառեց իր ստացած տեսական գիտելիքները, աշխատելով ժամանակի փորձված վիրաբույժներից մեկի՝ զոցենտ Կ. Կ. Ռեյերի ղեկավարությամբ: Այստեղ նա աշխատում է մասնագիտական բնույթ ունեցող հոսպիտալում՝ Ալեքսանդրապոլ բերված հազարավոր վիրավորների վիրաբուժական բարդ դեպքերի մասնագիտացված բժշկական օգնության կենտրոնում: Այս հոսպիտալում իր ծառայության մի քանի ամիսների ընթացքում Ն. Ա. Վելյամինովը ներկա է գտնվում, օգնում է, ինչպես նաև ինքն է կատարում բազմաթիվ ու բազմատեսակ վիրաբուժական բարդ օպերացիաներ: Այսպես, Կ. Մ. Գորբելյանկոն իր աշխատության մեջ աղյուսակների ձևով տեղեկություններ է բերում այդ հոսպիտալում կատարված ամպուտացիաների և ռեզեկցիաների վերաբերյալ: Այդ աղյուսակներից հայտնի է դառնում, որ ստորին վերջույթների 10 ամպուտացիաներից 5-ը կատարել է Վելյամինովը, աղդրի 18 ամպուտացիաներից՝ 4-ը, արունքի և ոտքի մասների ամպուտացիայի 10 դեպքերից՝ 3-ը, ինչպես նաև վերին վերջույթների վրա՝ ռեզեկցիայի 4 օպերացիաներ: Այսպիսով, Ալեքսանդրապոլում Ն 10 հոսպիտալում կատարված 38 ամպուտացիաներից 12-ը կատարել է Վելյամինովը: Այդ օպերացիաների մեծ մասի բարեհաջող ելքը վկայում է երիտասարդ բժշկի հարաճուն վարպետության մասին:

Բայց այստեղ ամփոփ միայն ամպուտացիաների և ռեզեկցիաների մասին, իսկ հոսպիտալում շուրջ 500 տարբեր տեսակի վիրաբուժական ծանր դեպքեր են բուժվել՝ այնտեղ ծառայող 6 բժիշկների կողմից, որոնցից մեկը Ն. Ա. Վելյամինովն էր:

Ահա թե ինչպիսի պայմաններում էր ստանում իր յուրատեսակ «մարտական մկրտությունը» երիտասարդ բժիշկ Ն. Ա. Վելյամինովը: Բնորոշ է նաև այն, որ նորավարտ բժիշկ Վելյամինովը Ալեքսանդրապոլում անցավ վիրաբուժական գործունեության տարբեր էտապներ՝ որակավոր ղեկավարի ձեռքի տակ աշխատելուց մինչև ինքնուրույն գործունեությունը: Այդ էտապների անցումը կատարվեց արագորեն՝ պատերազմի պայմանների կյանքի ռիթմով:

Սակայն Ն. Ա. Վելյամինովի Ալեքսանդրապոլի շրջանի գործունեության բնորոշ կողմերից մեկն էլ այն է, որ նա ոչ միայն ականատեսն եղավ և կատարեց բազմաթիվ ու բազմատեսակ բարդ ու զիջարին վիրաբուժական օպերացիաներ, այլև խորապես դիտեց և ուսումնասիրեց դրանք, այդ գիտողությունների արդյունքները Բորնգաուպոլի հետ համատեղ նկարագրելով վերը նշված աշխատության մեջ: Այդ նկարագրությունները կատարված են պատերազմի պայմանների համար կյանքի ձեռք, երբ ռազմի թոհ ու բոհի և հսկայական աշխատանքային լարվածության պայմաններում լրջորեն և հանգամանորեն նկարագրվում են վիրաբուժական դեպքերը՝ հենց իրենց, այդ դեպքերին վիրաբուժական բարձրորակ օգնություն ցույց տվող մարդկանց կողմից:

Սակայն Վելյամինովը և Բորնգաուպոլը դրանով էլ չեն բավարարվել: Նկարագրված դեպքերը վերլուծելով, նրանք բացահայտել են զրանց պատճառներն ու հետևանքները և տվյալների համադրումով հանգել որոշակի եզրակացությունների:

Հեղինակներն իրենց պարտքն են համարել նկարագրել և արժեքավորել 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ռազմաճակատում վիրաբուժական օգնությունը, բազմակողմանի կերպով բացահայտելով թե՛ դրական և թե՛ բացասական կողմերը: Դրանով էլ չբավարարվելով, նրանք տվել են իրանց կարծիքը. թե ինչպես պետք է լինի ռազմական հոսպիտալը:

Ն. Ա. Վելյամինովի գիտական և պրակտիկ գործունեության սկիզբը հիանալի ապացույց է այն բանի, որ սիստեմատիկ կերպով ձեռք բերված, պրակտիկայի հետ կապված տեսական լուրջ գիտելիքները լայն հնարավորություն են սանելովում գործնական և գիտական բժշկության ասպարեզում հսկայական առաջընթացի համար:

Այսպիսով, Ն. Ա. Վելյամինովի կարճատև, բայց շատ բեղուն պրակտիկ և գիտական գործունեությունը Հայաստանում՝ իր պատմական նշանակությունը պահպանում է հետևյալ կողմերով.

1. Ն. Ա. Վելյամինովը հանգիստացել է Հայաստանի տերիտորիայում 1877 թ. առաջին բարձրորակ մասնագիտական-վիրաբուժական հոսպիտալի հիմնադիրներից մեկը:

2. Ն. Ա. Վելյամինովի և Բորնգաուպոլի «1877—78 թթ. կամպանիայի ժամանակ Կովկասում զարտային վիրաբուժությունից» աշխատությունը 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ռազմաճակատում, մասնավորապես Ալեքսանդրապոլում վիրաբուժական օգնության պատմության ամենահարուստ սկզբնաղբյուրն է:

3. Հայաստանում Ն. Ա. Վելյամինովի գործունեությունը մեծ վիրաբույժի կենսագրության մեջ նշանակալից է իբրև նրա պրակտիկ ու գիտական բազմաբեղուն աշխատանքի սկիզբ:

А. А. ЛАЛАЯН

Н. А. ВЕЛЯМИНОВ В АРМЕНИИ

Резюме

Н. А. Веляминов во время русско-турецкой войны 1877—1878 г. служил на территории Армении в Александрополе (ныне Ленинакан) в качестве военного врача. Здесь он стал одним из основоположников первого высококвалифицированного специализированного хирургического госпиталя.

Труд Н. А. Веляминова и Бронгауцц под заглавием «Из полевой хирургии на Кавказе в кампанию 1877—1878 гг.» является самым богатым источником истории хирургической помощи на Кавказском фронте, в частности в Александрополе во время русско-турецкой войны 1877—1878 гг.

В биографии Н. А. Веляминова в период деятельности в Армении знаменует начало его весьма плодотворной практической и научной деятельности.